COOPERATION MEMORANDUM
between
Enterprises Incubator Foundation and National University of Architecture and Construction of Armenia



COOPERATION MEMORANDUM

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Yerevan — December 08, 2020

ք. Երևան — «08 » Դեկտեմբեր 2020 թ.

Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամը, ի դեմս տնօրեն Բագրատ Ենգիբարյանի, և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, ի դեմս ռեկտոր Ե. Վարդանյանի, (միասին այսուհետև՝ «Կողմեր»), հաշվի առնելով համագործակցության հանդեպ փոխադարձ հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը, ինչպես նաև կարևորելով Կողմերի միջև փոխհամագործակցության ամրագրումը, ի նպաստ Հայաստանում նորարարական և տեխնոլոգիական բարձրագույն կրթության զարգացմանն ու ընդլայնմանը, կնքեցին սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր):

EIF, represented by the director Mr. Bagrat Yengibaryan, and NUACA, represented by the rector Prof. Yeghiazar Vardanyan (hereafter Sides), taking into consideration the mutual interest and willingness, as well as the importance of establishment a mutual cooperation between Sides, that will support innovational and technical higher education development and expansion in Armenia, the Sides sign this Cooperation Memorandum (hereafter Memorandum).

## 1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Կողմերը համաձայնվում են, որ կհամատեղեն իրենց ջանքերը նոր կրթական ծրագրեր ներմուծելու և բարձրագույն կրթության ներուժը զարգացնելու ուղղությամբ, մասնավորապես, կքննարկեն համատեղ ծրագրեր և գործունեություն իրականացնելու հեռանկարները հետևյալ ուղղություններով.

1.1. «Կլիմայի փոփոխության տեխնոլոգիական արսելերատոր» ծրագրի շրջանակում «Building Information Modeling» մագիստրոսական ծրագրի ներդրում;

1.2. Շինարարության և նորարարության ոլորտում կրթական էկոհամակարգի առաջխաղացում, ստարտափերի տեղծմանն ուղղված աշխատանքների իրականացում, աջակցող մեխանիզմների ձևավորում;

1.3. Սփյուռքից և միջազգային ցանցից ոլորտային մասնագետների ներգրավում;

1.4. Ոլորտում տեղական և արտասահմանյան ներդրումների աճի խթանում, նոր գործընկերների հետ հարաբերությունների հաստատում;

## 2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

2.2. Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն Հուշագրի անբաժանելի մասը կազմող առանձին համաձայնագրով և իրավաբանական ուժ կունենան Կողմերի ստորագրման պահից:

2.3. Հուշագիրը Կողմերի համար չի առաջացնում իրավունքներ և պարտականություններ:

2.4. Հուշագիրը կնքված է 2 (երկու) օրինակից, հայերեն լեզվով: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Հուշագրի մեկական օրինակ:

## 3. ՀՈՒՇԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐՈՂ ԿՈՂՄԵՐ

| | |
|---|---|
| Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամ | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան |
| Բ. Ենգիբարյան | Ե. Վարդանյան |